

Սօփայ իշու կաթին հաս-  
րաթ մեռնիս.

Ջաղցի փաթերակին զաս.

Սև օջորջի տակին ալիբ  
մաղես.

Սև յարկի տակին ապրես.

Տաշաի հաց ուտես.

Օջորջ մրոտես.

ՓԱՂԱՔՇԱԿԱՆ ԽՕՄՔԵՐ

Ազիզ որդի.

Անուշ ջան:

Աշխարհի բարբաբ.

Աչքիս լիս.

Արև ջան.

Գլխիս տէր.

Քազաւոր ջան.

Քոմփիլիկ ջան.

Իմ աշու կուռը.

Իմ եար ու իմ դարդ.

Իմ տէր ու տիրական.

Մոցիս գառը.

Շահ ու սուլթան.

Պարոն ջան.

Պարոնս որ դու ես.

Ջան բալայ.

Ջանիդ մատաղ.

Սիրուն բալայ.

Փաշայ ջան:

## Հ Ե Ք Ի Ա Թ

ՕՆՏԵ ԱՆՊԷՐ ՄԻ ՔԻՐ.

Էլէլ են չեն էլէլ օխան ախպէր: Էտ օխան ախպէրը քիբ չեն ունենում. դրանք մի հետ տանիցը դուս զնալիս, մօրն ասում են թէ. թէ որ աղայ բերես, գութանը կզնես կտերը, թէ որ աղջիկ՛ ջահրէն. մենք էլ որ տենանք գութանն աս դրած, էլ գալ չենք, թէ որ տենանք ջահրէն աս, կզանք: Ասում են ու գնում: Մէրը խտոր աս ընգնում, աղջիկ աս բերում, հմա տատմէրը սխալում աս գութանն աս զնում կտերը: Ախպէրտինքը հեուունց եփ որ գութանը տենում են, թողում են գնում: Էդ աղջիկը վենձանում աս. սրանք էլ մի շուն են ունենում, անումը Պուլտիկ: Մի օր հրեանների աղջկերանց հետ իրանց տան զիմացի ծառի տակին գուլթա անելիս, մինը իրան թելը կորցնում աս: Ձիմն էլ իրանց ախպօրտանց արևովը օրթում են ուտում, որ տեհել չեն. սա էլ իրանց Պուլտիկի արևովն աս օրթում ուտում: Ննդերտինքը ասում են, խի՛ չես ախպօրտանցդ արևովը օրթում ուտում, դու օխան ախպէր ունես: Գնում աս մօրը հարցնում աս, նա էլ ասում աս թէ հա դրուտտ աս: Վեր աս կենում էս աղջիկը գնում ախպօրտանցը ման գալու: Գնում աս գնում, տենում աս մի տուն, տենում աս էտ տան միջին ամեն բան կայ, հմա օքմին չկայ. ըստ կերակուր աս էփում, պատրաստում ու ինքը տապ աս կե-

նրմ: Դու մի տախի էդ տունը իրան ախպօրտանց տունն ա: Ախպէրտինքը զալիս են տենըմ կերակուր էփած, տունըն աւլած, խտակած, ամէն բանը սարքին-կարքին, հմա կարքմ չեն իմանան թէ էս ով ա արել:

Եփօր օրը ախպօրտանցի մինը մի տեղ տապ ա անըմ. եփ որ քիրը տենըմ ա որ ոչով չկայ, դուս ա գալիս. էն վախտը ախպէրը տէնըմ ա սրան ու բռնըմ. վերչը հարց ու փորձով իմանըմ ա որ իրանց քիրն ա: Բիզունը որ մէկէլ ախպէրտինքն էլ տուն են գալի, նրանք էլ են իմանըմ ու շատ ուրխանըմ են: Դրանից եղը օխտն ախպէր մի քիր իրանց հմար արխէլին ապրելիս են ըլըմ: Մի օր եփ որ ախպէրտինքը տանը չեն ըլըմ, էդ աղջիկը մի չամիչ ա գտնըմ: Գուլտին ասըմ ա ինձ տն, թէ չէ կփչեմ թորոնդ կհանգցնեմ. նա տալիս չի-նա էլ փչըմ ա հանգցնըմ: Էդ աղջիկը գնըմ ա կրակ բերելու. գնըմ ա գնըմ, տենըմ ա հրէս մի տեղից ծուխ ա վեր ըլըմ, մօղանըմ ա, տենըմ ա որ հրէս կրակի դրաղին մի պառաւ կնիկ ա նստած, քառասուն փութ արճին բերանը գցած մաստակի տեղ ծածըմ ա: Էս պառաւիցը կրակ ա ուզըմ. պառաւը համ կրակ ա տալիս, համ էլ մի բուռը մոխիր, որ իզակորուստ չլի: Եփ որ էդ աղջիկը ետ ա գնըմ, էդ պառաւի տղէն, որ մի դե ա ըլըմ, գալիս ա, մօրիցը իմանըմ ա որ տենց բան ա էլէլ, ու էս աղջկայ իղը բռնած գնըմ ա հասնըմ նրանց տան դռնը. ասըմ ա դուռը բաց արա քեզ հմա դարթարանքնի եմ բերել: Էս աղջիկը բաց չի անըմ. եփ որ տենըմ ա որ դուռը բաց չի անըմ, ասըմ ա թէ մատդ դռան ծակիցը հանի, մտանի գնեմ մատըմդդ. եփ որ մատը հանըմ ա, դեը մատը կտրըմ ա ու գնըմ: Էս աղջիկը նղաւըմ ա վեր ընգնըմ: Ախպէրտինքը գալիս են տենըմ դուռը եղնափակ տըւած, կտրովը տուն են մտնըմ, տենըմ են իրանց քիրը նղաւած, եզ են բերըմ ու իմանըմ են ամեն բան ինչ որ անց ա կացել: Դնըմ են դեին սպանըմ ու բերըմ իրանց տունը մի ֆորըմ թաղըմ: Դեի մէր պառաւն էլ գալիս ա ու զօռով դրանց տանն ապրըմ ա: Ախպէրտինքը ասըմ են որ ֆորի վրայ լուր չածեն, պառաւը խաստի թաղուն անըմ ա. էդ ֆորի վրայ լուր ա դուս գալի, ինչպար քաղըմ են, էլ եզ դուս ա գալի: Ախպէրտինքը թամբա՛ են անըմ որ էդ խոտիցը գցեն ոչ կիրակըրի մէջ, հմա պառաւը թաղուն գցըմ ա. ախպէրտինքը էզ կիրակուրը ուտըմ են ու զոչ են դառնըմ: Վենձ ախպօր անըմ Աւագ ա ըլըմ: Քիրը էզ Աւագի շորերը հագնըմ ա ու տանըմ ա դրանց ըրածացնելու: Ղոչ-ախպօրտանցը ըրածացնելու վախտը, մի հետ թագաւորի տղէն լընըմ ա էս աղջիկ-չորանին, շատ հանըմ ա, վեր ա ունըմ էս աղջկանն էլ գոչերին էլ, տանըմ:

ա իրա ըմբարթը, ու էդ աղջկայ վրայ պսակւում ա ու զոչերին էլ պատուով պահում են:

Քաղաւորի բարեգամ կնանիքը տներում են որ թագաւորի աղէն էդ աղջկանը շատ ա սիրում, ուզում են դրան մի փոթոցի բերին. մի հետ դրան հետներուն տանում են ջրումը լիզանալու ու գցում են ջուրը. էդ կնաննոցի մինը հագնում ա նրա շորերը ու գալի տուն. թագաւորի աղէն սրան ճանաչում չի, հենց գիդենում ա թէ իրան կնիկն ա. սա սուտ հիւանդանում ա ու ասում ա որ Աւագ զոյք մորթեն, իրան ուտացնեն: Քաղաւորի աղէն զարմանում ա թէ էդ զոչին էնդադար սիրում իր, հմի ոնց ես դիմիշ անում, որ ուզում ես մորթես ուտես. սա թէ ինչ անեմ, կենքը քաղցրն ա, իմ գեղն էլ էն ա: Կրակը վառում են, դանակին սըրմ են, գնում են որ զոչին բերին. եփ որ էն ջրի վրեցը անց կացնելիս են ըլլում, սա լիզու ա ըլլում ու ասում.

Սուրը սրել են, ջուրը դրել են,

Քիրա ջան, դուս արի:

էն սահաթին քիրը դուս ա գալիս ջրեցը: Քաղաւորի աղէն սրան որ տներում ա, ճանանչում ա. էն ստանայ, սուտ հիւանդ կընգանը կապել ա տալիս զաթրի պոչեցը ու քշիլ տալիս. եղնա թագազան էդ աղջկայ վրայ հրսանիք ա ըլլւ. ու դրանից եղը զոչերին շատ լաւ պահում են:

Բարին ըստի, շարին ընդի:

Հստածանէ իրեք ինձոր վիբ գայ, մինն ասողին, մինը լսողին, մինն էլ ալամ աշխարհքին:

